դանրուժելի ցաւն ոչ փարա(տ)էր, ո(ր)-
պ(էս) յայտնի իսկ է գիտողաց, որ ան-
հնարին է յումեք մի իր ինչ կապել
միւի բանին. բառնալ բնաւին կամ վեր-
ցընել, մինչեւ ի մի լոտակն եւ ի բնիոնն,
բայց ի թ(ա)գ(աւոր)ի(ն ո)ր միայն
հրաման ն(ո)ր(ա) է, եւ նա միայն է կա-
րող եւ հրամայող, բառնալոյ եւ շնորհե-
լոյ, ո(ր)պ(էս) արար մեզ քաղցրու-
թ(եամ)բ եւ ողորմութ(եամ)բն ա(ս-
տուծո)յ, վ(ա)ս(ն) զի նա միայն է
տ(է)ր եւ թ(ա)գ(աւո)ր ամ(ենայն)ի,
այլ (ո)ք ոչ չունի (այսպէս) հրաման
այս գործ առնելոյ՝ բայց միայն ի թ(ա)-
գ(աւո)րէն. եւ այս մեր բանն եւ գործն
երկու կերպիւ եղեւ. նախ որ պետխաթ
էր. եւ ոչ ի սկզբանէ եղած էր, երկրորդ
որ նոր էր եւ ոչ անցեալ ժամանակ ինչ ի
միջոց զոր չարն տնկեաց եւ սահմանեաց
ըստ իւր չար բարուցն. եւ ըստ իւր չար
խորհրդոցն տ(է)ր ա(ստուա)ծ լիցի
վրէժխնդ(... բաւական մը փճացած ...)ջ
եւս էր մեծ խղճմտանք եւ տարտ, որ ի
ձեր ժամանակէն մնայր չարեաց սերմն.
փառք եւ գոհութիւն ա(ստուծո)յ, ձեր
ականջօքն լուաք եւ ձեր բարի աչօքն
տեսաք. ազատ(ութիւն) յերկոցունց
ս(ուր)բ աթոռոցն, ո(ր)պ(էս) որ յա-
ռաջն էր. նոյնպէս եւ մեզ եղեւ ազատու-
թի(ւն) խղճմտանաց: Որովհետեւ տ(է)ր
գթացաւ եւ քաղցրացոյց զսիրտ թ(ա)-
գ(աւո)րի, որ բարձ զմիրին եւ զգիրն
ջնջեաց. Այսուհետեւ թէ մեռանիմ դուք
ողջ եւ առողջ կենայք: Դ(ա)րձ(եա)լ հո-
գեւոր որդիք իմ զձեր բնական սէրն զոր
ի նախնեաց հետէ ունիք (ա)ռ երկու
ս(ուր)բ աթոռոցն պարտիք հաստատուն
եւ անխղելի պահել. ոչ թէ վ(ա)ս(ն)
մարդոյ էք սիրող, այլ ս(ուր)բ աթոռո-
ցըն վ(ա)ս(ն) հաստատութե(ան) հաւա-
տոյս եւ հոգւոց փրկութի(ւն) ձերոյ.
իսկ որք... (սպաս)աւորք եւ առաջնորդ
լինին ս(ուր)բ աթոռոցն ըստ իւր(աքան-
չ)իւր գործոյն առնելոց են արդարադա-
տէ յա(ստուծո)յ իսկ դ(ուք պա)րտիք
հանապազ ար(ծ)արծել զձեր սէրն. զինչ
պաշտօն եւ պ(ա)տ(ա)ր(ա)գ մատչի ի
ս(ուր)բ աթոռսն ձեզ եւ ձեր ննջեցելոցն
մասն եւ բաժին լիցի լիցի ամէն: Այլ եւ
ցանկալիք իմ եւ ըղձալի(ք) հոգւոյ ի-
մոյ, եւ ա(ւր)հնեալ (զա)րմ եւ զաւակ
ս(ուր)բ մօրն լուսոյ. զի գրէ երեքտա-
սան առաքեալն Պօղոս ասելով ահա՛ օր
փրկութի(ւն) ահա՛ ժամանակ ընդունելի.
մի եւ մի իւիք տայցէք զպատճառն...մի
արատեսցի պաշտօնն. եւ արդ ի նոյն
գրելոյն միշտ ընդ ձեզ տեսանի անցումն
կենաց մերոց յարակայ. եւ այժմ հրաւի-
րէ մեզ առ ի նկրտումն անանցին անճա-
ռելոյն (որ)պ(էս) ճառէ նոյն ինքն
զմայլմամբն ասելովն, զոր ակն ոչ ետես
եւ ունկն ոչ լուաւ. եւ ի սիրտ մարդոյ
ոչ անկաւ. զայն պատրաստեաց սիրելեաց
իւրոց որ յոյժ ցանկալի եւ կարի փա-
(փ)աքելի տեսանի. ահա՛ եւ այժմ յայտ-
նեցաւ ձեզ. ամէն իր եւ բան մեր. զոր
կարճ ի կարճոյ եւ համառօտաբար զե-
կուցմամբ ծանուցաք ձեզ հազարն եւ
բիւրն միով իւիւ, ահա (ա)յս, Բ(2)
տարի է որ այս ա(ստուա)ծաստատ բար-
կութի(ւն)ս էջ ի վ(ե)ր(ա) տանս հայոց.
զի թէ որքան տագնապ վիշտ եւ նեղու-
թի(ւն) կրեցաք մեք մերայնովք միայն
ա(ստուծո)յ է գիտելի. եւ թէ որքան
փող (եւ) դրամ վատնեցաւ եւ դրուեցաւ
ատ եւ անդ, զի ոչ կա թիւ եւ ոչ չափ,
ո(ր)պ(էս) յայտնի է ձեզ այսպիսի իր
ի դուռս արքունեաց. այսքան ծախս ծա-
խեցաւ. հազիւ (հ)ազիւ զերծեալ ազա-
տեցաք զայն Բ(2) ս(ուր)բ աթոռն ի գե-
րութենէ եւ ի ծառայութենէ. ո(ր)պ(էս)
գրեցաք ի վերոյ. վ(ա)ս(ն) որոյ գոչէ
առաքեալն ի ամին ժամու այսու իրաց.
ահա՛ օր (բա)րկութեան, եւ օր ազատու-
թե(ան). զի ոչ ոք այսօր որ ձեռնտու եւ
յօժանդակ լինի ըստ յայսմ գործոյ ըստ
իւրաքանչիւր չափու, այ...ն նմանէ
կոստանդիանոսի եւ տր(դ)ատայ ս(ուր)բ
թ(ա)գ(աւո)րաց. ո(ր)պ(էս) ն(ո)ք(ա)
որ նորաբոր հիմամբ հիմնարկեալ շի-
նեցին, եւ այժմ դուք հանդոյն ն(ո)ց(ա),
նորակերտութ(եամ)բ կառուցա(նե)ք
ս(ուր)բ աթոռքն. եւ ս(ուր)բ զօրաբա-
րէլին ... (դ)աւերն տաճարին եւ գքա-
կումն նորին կրկնակի շինեալ. նորոգե-
ցաւ յայժմ եւ դուք ըստ նմին քառակի
նոր ն(որո)գեալ կառուցանէք, յիշատակ
ձեր (եւ) ձեր ննջեցելոցն. Եւ արդ սի-